

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԿԱՐԳԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՓՐԿԱՐԱՐԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ  
2014Թ. ԱՌԱՋԻՆԵՌԱՄՍՅԱԿՈՒՄԳՐԱՆՑՎԱԾ  
ՏԵԽՆԱԾԻՆ, ՏԱՐԵՐԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-  
ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳԴԵՊԲԵՐԻ, ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014Թ.  
ԱՌԱՋԻՆԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԱՌԱՋ ԱՑԱԾԱՐՏԱԿԱՐԳԴԵՊԵՐԻ,  
ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**



Հանրապետությունում 2014թ. առաջին եռամսյակում առաջացել է 2693 արտակարգ դեպք, պատահար (այսուհետ՝ ԱԴ), որից 1620-ը՝ տեխնածին, 125-ը՝ տարերային և 948-ը՝ սոցիալ-կենցաղային բնույթի:

2013թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ԱԴ-երի թվաքանակում գրանցվել է աճի միտում՝ 390 (16,9%-ով) դեպքով (2013թ.՝ 2303, 2012թ.՝ 2275), ինչը պայմանավորվեց տեխնածին և տարերային ԱԴ-երի թվաքանակում գրանցված աճով, որը ըստ դիտարկվող տարիների հարտահայտվեց համապատասխանաբար 501-ով (44.8%-ով) և 16-ով (14.7%-ով): Սոցիալ-կենցաղային ԱԴ-երի դասում վերջին հինգ տարիներից պահպանվող աճի միտումը այս տարվա հաշվետու ժամանակահատվածում արտահայտվեց ցուցանիշների 127-ով, 11.8%-ով նվազմամբ:


2012-2014թ. առաջին եռամսյակում ԱԴ-երի բաշխվածությունն ըստ բնույթի պատկերված են նկար 1ա, 1բ, 1գ-ում, համեմատական ցուցանիշներն ըստ բնույթի՝ նկար 1դ-ում:



Նկար 1ա. Նկար 1բ



Նկար 1գ.




Նկար 1դ.

Հաշվետու ժամանակահատվածում ԱԴ-երի զգոհվել է 130 (2013թ.՝ 138, 2012թ.՝ 85), տուժել՝ 1855 մարդ (2013թ.՝ 1874, 2012թ.՝ 1369): Թեև գրանցվեց ԱԴ-երի աճ, սակայն, դրանցից և՛ զոհերի, և՛ տուժածների թվաքանակում գրանցվեց նվազում, ինչը 2013թ. համեմատությամբ արտահայտվեց 8-ով (5.8%-ով)՝ զոհերի, 19-ով (մոտ 1.1%-ով)՝ տուժածների դասերում: ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումներ փրկեցին 27 մարդ (2013թ.՝ 25, 2012թ.՝ 13):

Զոհերի թվաքանակում գրանցվեցին հավասար ցուցանիշներ՝ բացառապես բաշխվելով տեխնաձին և սոցիալ կենցաղային ԱԴ-երին: Տեխնաձին ԱԴ-երի դասում 70.8%-ը (46 զոհ) բաժին ընկավ ՃՏՊ-ներին, իսկ սոցիալ-կենցաղայինի՝ 87,7%-ը՝ դիակի հայտնաբերման դեպքերին:

Տուժածների դասում, ինչպես և դիտարկվող ժամանակահատվածի նախորդ տարիներին, գերակշիռ մեծամասնությունը բաժին ընկավ սոցիալ-կենցաղային ԱԴ-երին. տուժեց 954 մարդ (ԱԴ-երից տուժածների 51,4%-ը, 2013թ.՝ 1089, 58,3%-ը, 2012թ.՝ 915 տուժած, 66.8%-ը): Ընդ որում՝ դասում տուժածների 99.9%-ը բաժին ընկավ թունավորումներին, որոնց ցուցանիշներին վազումով և պայմանավորվեց դիտարկվող ժամանակահատվածում ԱԴ-երից և՛ զոհերի, և՛ տուժածների վիճակագրական պատկերը:

2014թ. զոհվածների, տուժածների և փրկվածների համեմատական ցուցանիշներն ըստ ԱԴ-երի պատկերված է նկար 2-ում:




Նկար 2.

2014թ. հաշվետու ժամանակահատվածում ԱԴ - երի մասնաբաժնային բաշխվածության պատկերն էական փոփոխություն չկրեց՝ պահպանելով վերջին տարիներին ձևավորված սկզբունքը. ԱԴ-երի գերակշռող մասը՝ 91.2%-ը

(2457 դեպք) բաժին ընկալի ղեկներին, ՃՏՊ-ներին և թունավորումներին (2013 թ.՝ 89.5%-ը, 2062, 2012 թ.՝ 89.8%-ը, 2044 դեպք):

2014 թ. առաջին եռամսյակում ԱԴ-երի բաշխվածությունն ըստ բնույթի պատկերված է նկար 3-ում:



Նկար 3

2013-2014 թթ. առաջին եռամսյակում ԱԴ-երի համեմատական տվյալները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Հ/հ	ԱԴ անվանումը	2014				2013				2014-2013թթ. համեմատ	
		Միլիոն ՀՀ	Չույզ	Սիլիկոլ	Փոխիված	Միլիոն ՀՀ	Չույզ	Սիլիկոլ	Փոխիված	Քանակական	%-ային
1	Հրդեհներ	978	17	20	2	534	3	5	1	+444	83.1
2	Պայթյուններ	6	1	6	0	6	1	1	0	0	-
3	Փլուզումներ	21	1	3	0	36	0	4	0	-15	41.7
4	ՃՏՊ	612	46	869	25	542	51	773	20	+70	12.9
5	Պատահարներ երկաթգծի ուղիներին	3	0	2	0	1	0	1	0	+2	3 անգ.
6	Պատահար. ջրային հաղորդակցման ուղիներին	0	0	0	0	0	0	0	0	0	-
7	Պատահար. ճոպանային հաղորդակ. ուղիներին	0	0	0	0	0	0	0	0	0	-
8	Վթարներ էլեկտրաէներգետիկ համակարգերում՝ ԱԻ (ԱԻ սպառնալիքի) առաջացմամբ	0	0	0	0	0	0	0	0	0	-
9	Վթարներ կոյուղագծերի, ջերմային ցանցերի, խմելու ջրի մատակարարման և կոմունալ գազախողովակների համակարգերում՝ ԱԻ կամ դրա սպառնալիքի առաջացմամբ	0	0	0	0	0	0	0	0	0	-
<b>Ընդամենը՝ տեխնածին</b>		<b>1620</b>	<b>65</b>	<b>900</b>	<b>27</b>	<b>1119</b>	<b>55</b>	<b>784</b>	<b>21</b>	<b>+501</b>	<b>44.8</b>
10	Ջրհեղեղ	0	0	0	0	3	0	0	0	-3	-
11	Սելավ	0	0	0	0	0	0	0	0	0	-
12	Քարաթափում	12	0	0	0	10	0	0	0	+2	20.0
13	Փլվածք	3	0	0	0	1	0	0	0	+2	3 անգ.
14	Սողանք	3	0	0	0	0	0	0	0	+3	-
15	Ուժեղ քամի	39	0	1	0	19	0	1	0	+20	2 անգ.
16	Ձնաբուք	59	0	0	0	53	0	0	2	+6	11.3
17	Տեղատարափ անձրև	0	0	0	0	0	0	0	0	0	-
18	Ցրտահարություն	0	0	0	0	0	0	0	0	0	-
19	Կայծակահարում	0	0	0	0	0	0	0	0	0	-
20	Ուժեղ կարկուտ	0	0	0	0	0	0	0	0	0	-
21	Գրունտային ջրերի հորիզոնի բարձրացում	0	0	0	0	0	0	0	0	0	-
22	Երկրաշարժ	9	0	0	0	23	0	0	0	-14	60.9
<b>Ընդամենը՝ տարերային</b>		<b>125</b>	<b>0</b>	<b>1</b>	<b>0</b>	<b>109</b>	<b>0</b>	<b>1</b>	<b>2</b>	<b>+16</b>	<b>14.7</b>
23	Թունավորումներ	867	7	953	0	986	15	1089	2	-119	12.1
24	Դիակի հայտնաբերում	57	57	*	0	65	65	*	0	-8	12.3
25	Ջրահեղձում	1	1	0	0	3	3	0	0	-2	66.7
26	Պայթուցիկ սարքերի տեղադրման ահազանգ	1	0	0	0	2	0	0	0	-1	50.0
27	Զինամթերքի հայտնաբերում	19	0	0	0	15	0	0	0	4	26.7
28	Համաճարակներ	3	0	1	0	4	0	0	0	-1	25.0
<b>Ընդամենը՝ սոցիալ կենցաղային</b>		<b>948</b>	<b>65</b>	<b>954</b>	<b>0</b>	<b>1075</b>	<b>83</b>	<b>1089</b>	<b>2</b>	<b>-127</b>	<b>11.8</b>
<b>Ընդամենը</b>		<b>2693</b>	<b>130</b>	<b>1855</b>	<b>27</b>	<b>2303</b>	<b>138</b>	<b>1874</b>	<b>25</b>	<b>+390</b>	<b>16.9</b>